

**ԴԱՆԹԵԱԿԱՆԻ ԸՄՐՈՆՈՒՄԸ**  
**ՀԱՅՈՑ ԵՂԵՆԱԴԱՏՈՒՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Երբ խոսում ենք հայ ժողովրդի պատմության ամենացավոտ իրողության՝ Եղեռնի վերաբերյալ, խոսում ենք պատմական ճշմարտության լեզվով, այն է՝ պետականորեն ծրագրված մի ողջ ազգի բնաջնջում, ֆիզիկական ոչնչացման ենթարկում՝ կազմակերպված երիտթուրքական պարագլուխների կողմից:

Այս ժամանակաշրջանի չարահուշ պատմական անցքերն իրենց ստեղծագործություններում վկայակոչել են մի շարք մեծահամբար մտավորականներ, գրականության ականավոր ներկայացուցիչներ, ովքեր գեղարվեստական հզոր պատկերներով նպատակասլացորեն պատկերել են մեր ազգի պատմության դժնդակ իրողության՝ Հայոց մեծ եղեռնի թեման:

Այս դիտանկյունից Հայոց մեծ եղեռնը գրականության մեջ պատկերելու ավանդույթը մեր նոր քնարերգության մեջ սկզբնավորել է Սիամանթոն: Դեռևս Մեծ եղեռնից առաջ հայոց աղետավոր իրականությունը ներկայացնող սահմնկեցուցիչ ու սարսափազդու պատկերների, Կիլիկիայի ավելի քան երեսուն հազար հայերի ջարդի բոթն է դրդել Սիամանթոյին գրելու «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուն: Վաղ շրջանում՝ 1909 թ. հունիսի 18-ին, աղետյալների համար օգնության մեկնած հանձնաժողովի միակ հայուհին՝ արիասիրտ Չապել Եսայանը, ամուսնուն գրած նամակում մասնավորաբար նշում է. «ո՛չ մեկ հույս, ո՛չ մեկ ապագայի նշույլ... մա՛հ, ավերա՛կ, անոթություն, հիվանդություն և բա՛նտ... երկիր մտած միջոցնիս առաջին տպավորությունն այն է, որ մեռելի տուն կը մտնամ կոր, այն ալ դեռ չթաղված, թա՛րմ մեռելի տուն»<sup>1</sup>:

Խորհրդային իշխանապետության օրոք մտավորականների համար հատկապես խրթին էր դառնալ հայության մեծ ողբերգության թարգմանը, համազգային իղձերի ու ձգտումների արտահայտիչը: Ժամանակի պարտադրանքներին «հանդուզն» ընդդիմախոս, ժողովրդի կրած կորստի ու տառապանքի մասին բարձրաձայնող բանաստեղծական ընդվզումն ձեռնարկեց Հովհաննես Շիրազը: Ստալինյան բռնարարքներին զոհ դարձած մի շարք մտավորական-

<sup>1</sup> Եսայան Չ., Նամակներ, Եր., 1977, էջ 93:

ների օրինակի հաշվի առնելով (Ե. Չարենց, Ա. Բակունց, Գ. Մահարի, Զ. Եսայան, Վ. Թոթովենց), նախնական շրջանում Շիրազը ստիպված էր իր ասելիքը մատուցել որոշակի զգուշավորությամբ, ժամանակի անազատ մթնոլորտում, խորհրդային պետական գաղափարախոսությանը զգուշորեն ընդդիմանալով՝ Շիրազը հանդգնեց մաքառել համուն ազգային ինքնաճանաչման վաղուց արդեն մոռացության մատնված խնդրին, նա հարկ համարեց վերականգնել ժողովրդի ոտնահարված իրավունքները, նա իր ստեղծագործությամբ «զոհի» հոգեբանություն որդեգրած ժողովրդին սնուցեց ապագայի հանդեպ հավատով, համակեց հույսերի ու արդարացիության կայացման տեսլականով: Նա ստեղծագործեց հախուռն ընդվզմամբ միմիայն ներկա և գալիք սերունդներին ոգեկոչելու նպատակադրմամբ:

Միլիոնավոր զոհերի, կորցրած հայրենիքի ողբերգության գիտակցման մղմամբ ստեղծագործող Շիրազի երկնած անգնահատելի գրական ժառանգության այլևայլ մանրամասներին կանդորառնանք առավել ուշ: Մինչդեռ հայության կորուսյալ հայրենիքի և մեր ժողովրդի ողջ պատմության մեջ կրած ժանրագույն ողբերգության՝ Մեծ եղեռնի վերաբերյալ իրենց հոգու վիշտն ընդհուպ անձնական ողբերգություն ընկալող քանիցս այլ մտավորականներ փառահեղ ավանդ ներդրեցին հայ քնարերգության ձևավորման և հետագա զարգացման համար:

Ժամանակի իմաստուն այրերը գիտակցեցին այն հանգամանքը, որ հայերենի գեղարվեստական խոսքի կշիռը բարձրացնելու և նրան համամարդկային արժեք հաղորդելու համար հարկ էր ձևավորել ոչ միայն գեղարվեստական մտածողություն, այլև առհասարակ հայ մտքի համակողմանի զարգացում ու հզորացում: Այս համոզումներով ընկղմված, հետեղեռնյան շրջանում հայ գրականության մեջ ձևավորվեց մի երևույթ, որ կարելի է բնորոշել համաշխարհային գրականության համանման պաթոսով ստեղծագործություններում աղերսներսներ գտնելու և համեմատություններ կատարելու գրական ավանդույթ:

Այսպես եղեռնի թեման արծարծող հայ քնարերգության մարգարիտների մասին խոսելիս, անկարելի է չվկայակոչել 13-րդ դարի իտալացի բանաստեղծ Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմի՝ «Դժոխք» մասի բովանդակային և սիմվոլային որոշ գծերի նմանողությունն ու վերարծարծումը մեր այդ շրջանի գրականության մեջ: Թերևս նույնիսկ տրամաբանական է այս գրական զուգադրությունը, քանի որ եղեռնի դժոխքը իր ահազու պատկերներով չի զիջում դանտեական դժոխքին:

Դեռևս վաղ շրջանում եղեռնի զարհուրելի տեսարանները նկարագրելիս Սիամանթոն ևս վկայակոչել է Դանտեին, իր վերոնշյալ

«Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուի՝ «Թթնին» բանաստեղծության մեջ, մասնավորաբար գրելով՝

Մինչ՝ մահերու և մոխիրներու մեր դանթեական ճանապարհին՝  
Ինձ ուղեկցող ընկերուհիս մանկան մը պես սկսավ լալ...

Յետագայում Չարենցը՝ ցավն ու կորուստը վերապրած, այլևս անհայրենիք բանաստեղծը պիտի խորապես անդրադառնար այս թեմային՝ ականատեսի աչքերով: Չարենցն իր անմիջական տպավորություններն հիմք ընդունելով 1915-16 թթ. գրած իր պոեմն վերնագրեց «Դանթեական առասպել», հետո արդեն իր «Մահվան տեսիլ» պոեմը, որտեղ անդրշիրիմյան տեսիլային ճամփորդության ուղեկից ու առաջնորդ է ընտրված Դանտեն: 1916 թ. Յուլի. Թումանյանը գրեց «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունը, ուր ականհայտ է Դանտեի պատկերած դժոխքի հետ անմիջական զուգահեռը<sup>1</sup>: Անխոս պետք է փաստել, որ վաղ շրջանի Չարենցն իր գրական ազգակցությամբ և կրած որոշակի ազդեցությամբ կապված էր իր մերձավոր նախորդներին, սույն պարագայում Սիամանթոյին: Սիամանթո-Չարենց գրական ազգակցության վերաբերությամբ կա ծավալուն բնութագրություն՝ իր համակողմանի դրսևորումներով<sup>2</sup>: Յայոց եղեռնը Դանտեի «Դժոխքի» հետ զուգադրելիս թե՛ Չարենցի, թե՛ Շիրազի համար ուսուցիչ էր Սիամանթոն, թեև Շիրազի ստեղծագործության գեղարվեստական մարմնավորման համար հայոց ողբերգության պատկերավորման միջոցներն առավել ընդգրկուն էին, քանի որ նախորդներն արդեն իսկ ստեղծել էին ավանդներ և աղերսներ գտել Դանտեի սիմվոլիկայի հետ: Յետո 1915 թ. օգոստոսին իբրև կամավոր ռազմաճակատ մեկնած տասնութամյա Չարենցը՝ անմիջական տպավորություններով, իր մարտական ընկերների նահատակմանը նվիրեց «Չարենց-Նամես» պոեմը: Ինչպես եր. Օտյանը, ով չորս տարի շարունակ տեսել էր եղեռնի զարհուրությունը, հետո խոստովանեց, որ «իր սկզբնավորության շրջանին չէի պատկերացներ աղետին ահռելի մեծությունը» և գրեթե ամբողջությամբ ականատես լինելուց հետո նոր միայն պիտի ըմբռներ, որ թուրքերի կողմից հայերի անասելի տանջանքները գերազանցում էին Դանտեի «Դժոխքի» երևակայական պատկերներին, ի մասնավորի՝ բավական է հիշել նրա «Անիծյալ տարիներ» հուշագրությունում պատկերված միայն Օսմանեից Իսլահիե կառքով ճանապարհվելիս նրա տեսածն ու նկարագրածը<sup>3</sup>:

<sup>1</sup> Մուրադյան Ա., Գրական Յանգրվաններ, գիրք 9, Եր., 2010, էջ 10:

<sup>2</sup> «Սիամանթո-Չարենց գրական ազգակցությունը» ուսումնասիրություն, Գրական հանգրվաններ, գիրք Ա, Երևան, 2003:

<sup>3</sup> Տես նույնը, գիրք 9, էջ 111:

Հայկական ջարդերն ընդմիջումներով կրկնվում էին: Իրենց բարձրակետին հասան 1915-18 թթ.՝ ողջ արևմտահայությանն իր պատմական հայրենիքից տեղահանությամբ և բնաջնջումով, այնուհետև՝ մինչև 1923 թ., շարունակվեց նաև արևելահայության բնաջնջմանը նպատակադրված քեմալական ոճրագործություններով: Այնպես որ Խորհրդային Ռուսաստանի այլազգի քաղաքական ղեկավարները 1918 թ. սկզբին Գերմանիայի հետ կնքած Բրեստ-Լիտովսկյան ամոթալի ու ցավալի համաձայնագրից հետո թուրք զործիչների հետ 1920 թ. օգոստոսից սկսված պաշտոնական հանդիպումներում իրենց իրավունք էին վերապահում հայտարարելու, թե հայկական հարց այլևս գոյություն չունի, քանի որ նրանք՝ թուրքերը, այն արդեն լուծել են<sup>1</sup>:

Այս դժոխային քաղաքական իրադրությունն իր արտացոլումն հետզայում գտավ գրականության մեջ: Բուն Արևմտահայաստանում եղեռնի սարսափներն ու հայության իրական ողբերգությունը տեսնելուց հետո Հովի. Թումանյանը այդ ապրումների ազդեցությամբ գրեց «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ» բանաստեղծությունները, հետագայում նաև քառյակներ: 1916 թ. լույս տեսած «Հայրենիքիս հետ» բանաստեղծական ժողովածուն թեմատիկ-գաղափարական որոշ ընդհանրություններ ունեցող գեղարվեստական հզոր ընդհանրացումների կերտվածք է: Այդտեղ՝ «Մեր նախորդներին», «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Վերջին տազնապը», «Դժոխքի հանդեպ», «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ», «Բարձրից» բանաստեղծություններում է խտացրել գաղափարային մի շարք նրբերանգներ: Թումանյանի այս և այլ մտավորականների այս շրջանի ստեղծագործություններն ներփակում են մի էական գաղափար, այն է՝ համայն հայության համախմբման պատգամախոսությունը: Օրհասական պահին փրկության տկարացող միակ լույսը՝ աշխարհի տարբեր կողմերից հայրենիքին օգնության եկող հայ զավակներն են, ում զորեղ միասնությունն է կարող լինել ելք՝ ճնշելու ավելի ու ավելի լպիրշացող, բիրտ ու կոպիտ, նենգ ու խարդախ թշնամուն:

Խորհրդային շրջանում սուտ ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությամբ համակված որոշ քննադատներ իրենց խղճուկ մտավարժանքներով ինքնապահովության համար Շիրազին հարձակումների փրախ էին դարձրել՝ մատնացույց անելով նրա ստեղծագործություններում տարբեր առիթներով առատորեն կիրառված տեղանուն-խորհրդանիշերը՝ դրանք համարելով նահանջ ճշմարիտ արվեստից,

ինքնակրկնության և ասելիքի սպառվածության ապացույց: Մինչդեռ շիրազյան ոչ մի պատկերի մեջ այդ խորհրդանիշներից որևէ մեկը նույնությամբ չի կիրառվել, այլ ամեն անգամ նորովի, նոր նրբերանգներով են գեղարվեստական պատկեր կազմել, ինչպես լուսինը «Հայոց դանթեականը» պոեմում հանդես է գալիս բազմաթիվ գիշերային տեսարաններում՝ ամեն անգամ մի նոր դերով ու կեցվածքով, «Քառյակներ լուսնապատումի» շարքի վաթսուներորդ քառյակներում տեսնում ենք նույնքան տարբեր լուսիններ<sup>1</sup>:

Գրականության մեծ նվիրյալները, ժողովրդի ցավն իրենցը դարձրած առաջադեմ մտավորականները լավագույն ապագայի բուռն մղումով, հույսերի իրականացման տեսլականով հանձն առան ելք որոնել, որը դարձավ տևական գործընթաց: Այս որոնումների մեջ նրանք վերուդիր արեցին հայության համար օգտակար և կամ փրկության հույս ներշնչող ամեն բան:

*Нора Ерзкян*

## ПОНИМАНИЕ ОБ ОТРАЖЕНИИ ГЕНОЦИДА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Нуже мы представляем статью, в которой затронута тема величайшей трагедии армянского народа – Геноцида армян, который имеет огромное значение и его выражение в армянской литературе. В статье кратко представлены те произведения, которые изображают эти события, то есть написаны на основе этих исторических событий. Новость статьи заключается в том, что приводится параллельное литературное сравнение Ада “Божественной комедии” итальянского поэта 13-ого века Данте Алигьери и армянской литературы, написанной на тему Геноцида.

Основной акцент поставлен на попытки представления Геноцида в армянской литературе Советского периода, когда обсуждение темы Геноцида было запрещено. Примечательно и то обстоятельство, что ад резни армян своими ужасающими сценами почти не уступает Аду, который описал Данте.

<sup>1</sup> Տե՛ս Գեոցիդ արման. Ответственность Турции у мирового общества. Документы и комментарии, Составитель о ответ. редактор проф. Ю. Г. Барсегов, т.2, часть 1, Москва, 2003, док. 856, էջ 195-196

<sup>1</sup> Մուրադյան Ա., Հովհաննես Շիրազ, Բանաստեղծը, Մարդը, Գիրք Ա, Մասն վեցերորդ, «Հայոց դանթեականը», Երևան, 2012:

## **COMPREHENSION ABOUT THE REFLECTION OF GENOCIDE IN ARMENIAN LITERATURE**

Below we present an article, in which we discuss the subject of the greatest tragedy in the history of the Armenian nation, the Armenian Genocide, an event that has a great expression and importance for the Armenian literature. Works depicting the events of the genocide are presented in this article, i.e. they are based on historical facts. The novelty is that a parallel literary comparison is conducted between the *Inferno* from *The Divine Comedy* written by Dante Alighieri, an Italian poet of the 13th century, and descriptions of the Armenian Genocide in the Armenian literature. The main emphasis is on the attempt of persistently presenting the topic of the Armenian Genocide in the literature of Soviet Armenia where there was a taboo on this subject. It is also noteworthy that the descriptions of the scenes of the genocide is by no means less horrifying than the Hell described by Dante.